

ՍԽԵՄԱՏԻՉՄԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

(ըստ պրոլետարական գրողների ասոցիացիայի համաձայնաստեղծած առաջին համագումարի ելույթերի)

Դ. Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիան (ՀՊԳԱ) Ա. Վլադու-նու գլխավորությամբ ձևավորվել է 1922 թ. դեկտեմբերին: ՀՊԳԱ-ն միակ կազմակերպությունը չէր: Առանձին էին Չարենցն ու համախոհները, ուղեկիցները և այլ խմբավորումներ: Այդուհանդերձ, պրոլետարական գրողներն ամեն կերպ ձգտում էին ղեկավար դիրքի և 1920—1930-ական թվականներին ծայր առած գրապայքարի պայմաններում ջանում հաստատել իրենց սկզբ-բունքները: Այդ պայքարի ընթացքում էլ պրոլետգրողների տեսական-գեղարվեստական հայացքներով ու գեղարվեստական երկերով ձևավորվեց սխեմատիզմը, ինչն այդ և հետագա տարիներին մեծ ավերածություններ գործեց գրականության մեջ՝ շատ դեպքերում մոլորեցնելով անգամ շնորհալի գրող-ներին:

Սխեմատիզմն արտահայտվեց դասական արժեքների ժխտումով, ավան-դուլթի անտեսմամբ, գրական նյութի և ձևերի նոր համարվող, բայց, ըստ էության, անհեռանկար սկզբունքների պարտադրմամբ, հոգեբանական վիճակներին հակադրվող քաղաքագիտական մերկապարանոց գաղափարայնու-թյամբ, կենդանի մարդուն փոխարինող խամաճիկ-խրտվիչակ հերոսով: Հայ-րենասիրության դեմ ուղղվեց նացիոնալիզմը, սիրո դեմ՝ բարոյական ան-կումը. մտքի դեմ՝ պատրաստի կաղապարը, ճշմարտախոսության դեմ՝ ար-յունոտ կացիներ: Չգալի շահով թուլանալով սոսկ Հայրենական պատերազմի տարիներին՝ սխեմատիզմը գոյատևեց մինչև 1950-ական թվականների կե-սերը:

Արվեստի և գրականության մեջ սխեմատիզմը ստալինյան գաղափարա-կան բռնատիրության ձև էր, որը, կասեցնելով մտավոր առաջընթացը և ար-յունոտ հաշվհարդարի ենթարկելով բոլոր ազատամիտ գրողներին, միև-նույն ժամանակ ստեղծեց իր դեմ ուղղված ընդդիմադիր շարժում՝ օպոզիցիա, որի մեջ էին բոլոր արժանավոր գրողները ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ ԽՍՀՄ-ում:

Սխեմատիզմի վերջնական հաստատմանն էր կոչված ՀՊԳԱ համահա-յաստանյան առաջին համագումարը, որը դեմարվեց 1925 թ. նոյեմբերի 4—6-ին, Երևանում: ՀՊԳԱ-ի կազմում էին 31 անդամ, 61 թեկնածու: Ըստ սոցիալական դրության. բանվորներ՝ 31 %, գյուղացիներ՝ 51 %, ծառայող մտավորականություն՝ 18 %: Նրանցից 30 %-ը կուսակցության անդամներ էին, 54 %-ը՝ կոմերիտականներ, 16 %-ը՝ անկուսակցական: Համագումարը հրավիրել էր հանձնախումբ՝ հետևյալ կազմով. պրոլետարական և հեղափո-խական գրողների միջազգային բյուրոյի անդրկովկասյան ներկայացուցիչ՝ Հ. Հակոբյան, համամիութենական պրոլետգրողների միության վարչության անդամ՝ Ա. Վլադուի, Խորհրդային Հայաստանի պրոլետգրողների միության վարչության նախագահ՝ Ալազան, նույն վարչության քարտուղար՝ Ն. Ջար-յան, ՀՊԳԱ անդամներ՝ Գ. Վանանդեցի, Ն. Դաբաղյան, Հ. Կարոյան, Ա. Ավե-տիսյան (Արաքս), Ռամա-Նայենց:

Համագումարն իր բնույթով առաջինն էր անդրկովկասյան հանրապե-տություններում և ուղղակիորեն առնչվում էր Ռուսաստանում կատարվող համանման իրադարձություններին: Մեր ձեռքի տակ է համագումարի ամբողջ նյութերի անտիպ սղագրությունը, որը 158 մեծադիր մեքենագիր էջ ծավալով

պահվում է ՀԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կուսակցական արխիվում¹։

Համագումարի առաջին նիստը բացվել է 1925 թ. նոյեմբերի 4-ին, շոբեքչաթի երեկոյան, կուլտուրայի տան դահլիճում։ Նախագահել է Ալազանը։

Պրոլետարական՝ նշանակում էր աշխատավորական, առավել շարժված բանվորական, այն տարիներին՝ նաև հակամտավորական։ Ուստի՝ դահլիճում, բեմի խորքից պատգամավորներին ողջունում էր մի մեծ կտավ, որը ներկայացնում էր բանվոր գրողի կերպար, ձեռքին՝ գրիչ և թուղթ։ Որպեսզի այս պրոլետարական գրողն իր համերաշխությունն արտահայտի գյուղի աշխատավորության ծոցից դուրս եկող գրողների հանդեպ, նրա շուրջը ծխացող գործարանների կողքին երևում են նաև գյուղեր ու դաշտեր։ Վերածնված մի պատկեր՝ ըստ Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» Արիստոլամ աղայի, որն իր նկարի հենքին շատ կցանկանար, որ երևային իր կավածքներն ու ագարակները, իսկ ինքն էլ պատկերվեր սպասավորներից մեկին շառաչուն ապտակով խրատելիս կամ մեկ ուրիշի խոնարհ բարեն ընդունելիս։

Ժամը 7-ին դահլիճ է մտնում համագումարի գլխավոր դեմքը՝ «Ժողովրդական բանաստեղծ և առաջին պրոլետարական գրող» Հ. Հակոբյանը։ Հնչում են որոտընդոստ ծափահարություններ։ Նվագախումբը թնդացնում է «Ինտերնացիոնալը»։ Ն. Զարյանը բացականչում է. «Կեցցե՛ պրոլետարական գրականությունը», «Կեցցե՛ պրոլետարական գրականության ավանգարդ Հակոբ Հակոբյանը», «Կեցցե՛ պրոլետարական գրականության հեգեմոնիան», «Կեցցե՛ համամիութենական պրոլետարական գրականության ասոցիացիան՝ ՎԱՊՊ-ը»։ Տոնական այս բացականչություններին ուղեկցում են «ուռա՛ ա՛ ա՛»-ներ ու ծափեր...

Բացման խոսք է ասում Հ. Հակոբյանը և իր որոշակի վերաբերմունքը հայտնում գրական խմբավորումների մասին։ Առաջնությունը վերապահելով իրենց՝ նա նաև ասում է, որ պրոլետարական գրականությունը «զասակադաշին» և «բանվորագյուղացիական» գրականություն է։ Ըստ Հակոբյանի՝ ուղեկիցների նկատմամբ իրենք այնքան ժամանակ կարող են լինել համերատար, ինչքան նրանք կարող են հանդես գալ որպես «պրոլետարականության ծառայող կամ սպասավոր»։ Այս ասելով հանդերձ, նա անմիջապես քաղաքական սեպ է խրում պրոլետգրողների և ուղեկիցների միջև ու հայտարարում. «Ուղեկիցները մեր սպեցիֆիկ պայմանների արդյունք են։ Մպեցիֆիզմն ունի իր առանձին պատմությունը։ Սպեցիֆիզմը դժբախտաբար ընդունել է մի այլանդակ կերպարանք մեզանում և դժբախտաբար չի համապատասխանում պրոլետարական գրականության հիմունքներին» (էջ 2)։ «Ինտերնացիոնալի» կրկնվող հնչյունների ներքո Հակոբյանն իր խոսքն ավարտում է այն բացականչություններով, որոնցով համագումարի բացումն ազդարարել էր Ն. Զարյանը։

Սարգիս Մելիքսեթյանի առաջարկությամբ ընտրվում է համագումարի նախագահություն՝ Հ. Հակոբյան, Ա. Վշտունի, Ալազան, Ն. Զարյան, Գ. Վանանդեցի, Գ. Աբով, Ն. Դաբաղյան, Ա. Փորսուղյան, Ռամա-Նայենց, քարտուղարություն՝ Հ. Միրաս, Ս. Մելիքսեթյան, Սարմեն, մանդատային հանձնաժողով՝ Տ. Վանյան, է. Խոճիկ, Հ. Մերկյան, Լ. Թարգյուլ և խմբագրական հանձնաժողով՝ Ն. Դաբաղյան, Գ. Վանանդեցի, Գ. Աբով։ Հաստատվում է նաև օրակարգը։

Ողջունելի խոսք է ասում ՀԿ (Բ)Կ Կենտկոմի ազիտ.-պրոպ. բաժնի աշխատակից Դ. Դզնունին և արմատավորում այն դրույթը, ինչը պիտի ուղենիշ դառնար ամբողջ համագումարի համար։ Դա պրոլետգրողներին բացարձակ

¹ ՀԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կուսակցական արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 125։ Սղագրությունը երբեմն կատարվել է բերականական, կետադրական վրիպումներով, հաճախ բաց են թողնվել առանձին տառեր։ Մեղբերումների ժամանակ ուղղել ենք ակնհայտ սխալները։ Այստեղից կատարվող հղումների էջերը կնշվեն բնագրում։

մենաշնորհի արժանացնելն էր: Իր ըմբռնումներին համապատասխան, Դզնունին վերաձևում է Ռկ(բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի «Կուսակցության բաղադրականությունը գեղարվեստական գրականության ասպարեզում» որոշումը, որի մեջ թեև տարբեր խմբակցությունների ազատ մրցակցության հարց էր դրվում ու թեև ասվում էր, թե սխալ է խմբակցություններից որևէ մեկին մենաշնորհ տալը, բայց և ըստ ամենայնի խրախուսվում էին պրոլետգրողները: Նրանց համար ստեղծվում էր ամեն նախադրյալ, որպեսզի «իրենց համար նվաճեն հեգեմոնիայի պատմական իրավունքը»: Հենվելով այս որոշման վրա՝ Դզնունին ասում է. «Մեր ցանկությունն է, որ պրոլետգրողների ասոցիացիան ընդլայներ իր շարքերը նորանոր տարրերով և ոչ միայն մեր պիոներական, այլև երիտմիության շարքերից վերցնելով իր շարքերը և այդ կաղամկերպությունը կարողանար այնքան զարգացնել, որ այլևս տեղիք չլիներ ոչ մի խմբակի, որ ասոցիացիայի սահմանից դուրս մնար...», որ նա կարողանար իր հեգեմոնիայի գործը ամրապնդել և վերջ տար ամեն մի խմբավորման, որոնք լցնում են մեր շարքերը և ծանրաբեռնում մեզ: Պետք է աշխատենք ամեն կերպ մեր շարքերից զտել անցանկալի տարրերին, որովհետև դա մի պատճառ է, որ վերջին հաշվով կթուլացնի պրոլետարական գրականության ուժը: ...Կարծում եմ, որ համապատասխան բանաձև կհանի վերջ տալու համար բոլոր տեսակի խմբակցություններին» (էջ 5—6): Սա նշանակում է, որ առանձին խմբակցությունների համար արտաքուստ հավասար գոյության իրավունքի պատրանք ստեղծելով և հեգեմոնիան վերապահելով ազատ մրցակցությանը՝ հիշյալ որոշումն, ըստ էության, ներքուստ խրախուսում էր պրոլետգրողներին և մղում գրական ղեկավար մենաշնորհի: Ահա դրանից էլ թե էին առնում ՀՊԳԱ անդամները:

Մկսվում են ողջունի ելույթները: Միջազգային պրոլետարական գրողների բյուրոյի հանձնարարությանը, որպես այդ բյուրոյի գործադիր կոմիտեի անդամ, խոսք է ասում Հ. Հակոբյանը: Նա վերստին հայ գրողներին կոչ է անում ընթանալ «դասակարգային գրականության» ուղիով և լինել «պրոլետարական դասակարգի ավանգարդն ու արտահայտիչը»: ՎԱՊՊ-ի կողմից, որպես այդ կաղամկերպության վարչության անդամ, հանդես է գալիս և՛ Վչոունին և իր հերթին ուժի դիրքերից ամրապնդում ՀՊԳԱ-ի մենաշնորհը, երազելով, որ մի քանի տարի անց պրոլետգրականությունը արդեն «հասած կլինի իր դիկտատուրայի բարձունքներին»: Նա թեև ասում է, որ «Մենք եղել ենք ներողամիտ դեպի ուղեկիցները, և դա քաղաքական ճիշտ վերաբերմունք է», այնուամենայնիվ այդ մոտեցումը ուղեկիցներին աստիճանաբար պրոլետարականացնելու նպատակ էր հետապնդում: «Ինտերնացիոնալի» հնչյունների ներքո նա ևս իր խոսքն ավարտում է «կեցցեններով»:

Վրաստանի պրոլետգրողների անունից վրացերեն ողջունում է հնագույն պրոլետգրող Զեմլեդելը: Նրա խոսքը հագեցած էր ամբողջ աշխարհը պրոլետարականացնելու նվաճողական պատգամներով: Ելույթը նա ավարտում է Հայաստանին նվիրված մի բանաստեղծությամբ: Խոսում է նաև Վրաստանի պրոլետգրողների ուսական բաժանմունքի ներկայացուցիչ Ն. Ստորը, որի ելույթի մեջ կան նաև ողջախոհ մտքեր այն մասին, որ «պրոլետգրողը պետք է զբաղվի ինքնակրթությամբ», հասկանա հին կուլտուրան և նրա վրա կառուցի նորը: Եվ ապա. «Մեր պետհրատի վերջին ուսումնասիրությունը ցույց է տվել. դժբախտաբար, որ պրոլետգրողների ստեղծած գրականությունը շատ քիչ է կարդացվում: ...Այժմ ավելի շատ կարդացվում են ոչ պրոլետարական գրքեր» (էջ 9):

Ողջունի խոսք են ասում նաև ուրիշները. Հայաստանի թուրք պրոլետգրողների անունից՝ Փ. Ասկարովը, արհմիությունների խորհրդի կողմից՝ Մ. Գրիգորյանը, ամերիկահայերի «Պրոլետար» թերթի ներկայացուցիչ Քյապապչյանը, տպագրական բանվորների անունից՝ Ա. Կողարաշյանը, համալսարանի ուսանողը Հ. Հովհաննիսյանը, հայկական դիվիզիայի կողմից՝ Գ. Շամունցը, խորհրդային դիրքորոշում ունեցող գրողների անունից՝ Դ. Դեմիրճյանը, պետհրատի տնօրեն Գ. Մեհրաբյանը, դերասան Մ. Զանանը, երկաթուղու բանվոր, բանթղթակից Թորիկը, էսպերանտիստների կազմակերպու-

թյան ներկայացուցիչ Գ. Սևակը, որը խոսում է էսպերանտո լեզվով և այդ լեզվով էլ թարգմանաբար ընթերցում Հ. Հակոբյանի բանաստեղծություններից մեկը:

Ողջույնի խոսքերը հիմնականում կրում էին ոգեշնչված «ուռա՛ ա՛ա՛»-ների բնույթ: Նույնիսկ ամերիկահայ Քյապապչյանն ասում է. «Ընկերներ, նացիոնալիզմի լսավարի մեջ տառապող պրոլետարիատը երկար տարիներից ի վեր սպասում էր լսել պրոլետարականության նոր ձայնը» (էջ 13): Նա, խոսքն ավարտում է՝ համաշխարհային հաղթանակ մաղթելով պրոլետարականությանը: Մյուսները պրոլետարականությունը գիտում են որպես բանվոր հարվածայինների սեփական գրականություն, պահանջում, որ այն արտացոլի նաև «հայ կարմիր բանակի կյանքը»:

Շատ բովանդակալի խոսք է ասում Դ. Դեմիրճյանը: Քանի որ հայ գրականության դասականի այդ ելույթն անտիպ է և անհայտ գրական հանրությանը, ուստի հրապարակում ենք ամբողջությունը:

«Ընկերներ, այսօրվա համագումարի առթիվ ես էլ կկամենայի իմ ողջույնի խոսքն ասել, որպես մեկը Հայաստանի գրողներից, որոնք հարում են հեղափոխությանը անվերադարձ կերպով: Հույս ունեմ, որ իմ ասածները կհամապատասխանեն պրոլետգրողների ձգտումներին:

Ընկերներ, գրականությունը ամեն մեկի առջև դնում է շատ դժվարին խնդիրներ, մանավանդ հիմա, երբ հեղինակն իր գրիչը թաթախելու է ոչ թե թանաքի, այլ հրդեհի մեջ: Շատ դժվար է պատասխանատվությունը ամեն մի հեղինակի համար: Հայ գրողների գործն ավելի դժվար է նրանով, որ գտնելովում են մի երկրում, որի էթնոգրաֆիական պայմանները տարբեր են ուրիշ երկրների պայմաններից: Այստեղ իդեոլոգիայի խնդիրը չի կարող լինել, այլ մեթոդոլոգիայի: Գրականության մեջ ներքին արվեստի մեթոդոլոգիայի խընդիրը միայն կա: Այստեղ է, որ պրոլետգրողը կանգնած է այնպիսի մաներաների առաջ, որը դժվարացնում է գրականությունը: Հայ պրոլետգրողների ասոցիացիան ունի մի առաջնորդող գիծ, որի վրա պիտի կանգնի: Դա այն գիծն է, որ նա, Հայաստանի հողի վրա կանգնած լինելով, պիտի աշխատի մյուս կողմից կապվել ոռու և համաշխարհային գրականության հետ: Ահա այս դժվարին խնդրի իրականացմանը պիտի աշխատի այս համագումարը, որին մենք էլ, այսպես ասած, ուղեկիցներս, մասնակցում ենք: Ծս ի սրտեցանկանում եմ, որ այդ դժվար աշխատանքի մեջ Հայաստանի պրոլետգրողների ասոցիացիան հաջողակ լինի և իր վրա դրված պարտականությունները կարողանա կատարել, մտնելով ավելի խոր Հայաստանի իրականության սպեցիֆիկ պայմանների մեջ և կապելով իր սրտի զարկերը ոռու և համաշխարհային գրականության հետ» (էջ 14—15):

Պրոլետգրողների սնապարծ տոնը մեղմում և սթափեցնող խոսք է ասում պետհրատի տնօրենը: Չժխտելով «պրոլետգրողների արժեքը», քանի որ նրանք կանգնած են «կուսակցության գծի վրա», նա նաև նշում է, որ նրանց հանդեպ՝ «կուսակցությունը պետք է լինի պահանջկոտ»: Այնուհետև՝ «Բավական է արդյոք լինել միայն կոմունիստ, ասելու համար, որ ես իմ գրիչը ծառայեցնում եմ պրոլետարականության: Դարձյալ ոչ: Մեր դավանանքը հեշտացնում է մեր գործը քաղաքական ֆրոնտում, իսկ կուլտուրականում՝ ոչ: ...Այս համագումարի ուղն ու ծուծը ոչ թե գրականության քանակը ավելացնելը պետք է լինի, այլ՝ որակը...» (էջ 16): Նա այն տեսակետն է պաշտպանում, որ եթե անգամ պրոլետարականությունը ձգտում է հեզմոնիայի, ապա դա պետք է լինի «հին ժառանգության» ավանդույթները շարունակելու ճանապարհով, մի բան, ինչն իսպառ ժխտում էին համագումարի տերերը:

Ողջույնի խոսքերին հաջորդում են ողջույնի հեռագրերը՝ հղված Մոսկվայի պրոլետարական և հեղափոխական գրողների միջազգային բյուրոյի, ՎԱՊՊ-ի կենտկոմի, ՎԱՊՊ-ի ազգային փոքրամասնությունների բյուրոյի, Երևանի կուսակցական կոմիտեի, Վրաստանի հայ պրոլետգրողների, Մոսկվայի հայ պրոլետգրողների «Մուրճ ու մանգաղ» խմբակցության, Անդրկովկասի կենտգործկոմի նախագահ Ս. Խանոյանի, Բաքվի հայ պրոլետգրողների

խմբակի, Վրաստանի պրոլետկուլտի կարմիր թատրոնի հայկական բաժանմունքի, Թրիլիսիի անդրկովկասյան կոմունիստական համալսարանի գրական-խմբակի, Երևանի տպագրական բանվորների, ՀԽՍՀ պետլուսկինոյի ակցիոներական ընկերության վարչության կողմից: Այդ հեռագրերի տակ դրված էին՝ Լուենաշարսկու, Դեմյան Բեդնու, Լեբեդինսկու, Լելևիչի, Վարդինի, Ռոզովի, Վալայտիսի, Բեզիմենսկու, Հայկունու և այլոց ստորագրությունները: Հեռագրերի բովանդակությունը նույնն էր՝ պրոլետգրողներին «մաղթվող» նույննվաճողական նկրտումները և, ինչ գնով էլ լինի, գրականության մեջ ղեկավար դիրքերի հասնելու բաղձանք: ՎԱՊՊ-ի վարչությունը նույնիսկ թշնամական վերաբերմունք է սերմանում ընդդեմ նույն ժամանակ գործող Հայաստանի պրոլետգրողների «նոյեմբեր» միության: Նրանց հեռագրի մեջ որոշակիորեն ասված է. «ՎԱՊՊ-ի վարչությունը գտնում է, որ զուգահեռ գոյություն ունեցող ամեն մի ուրիշ ասոցիացիա՝ արտահայտություն է թշնամական վերաբերմունքի՝ դեպի պրոլետգրականությունը: Այստեղից պարզ է ՎԱՊՊ-ի վերաբերմունքը դեպի Հայաստանի «նոյեմբեր» գրական խմբակը» (էջ 20): Մյուս հեռագրերում շարունակվում է ինքնամեծար ու սնապարծտունը, ըստ որի՝ «Կոմունիստական հեղափոխությունը բնականաբար պետք է հեղաշրջեր նաև բուրժուական գրականությունը և պրոլետարական դիկտատուրային զուգընթաց ստեղծեր իր՝ պրոլետարիատի գրականությունը...» (էջ 22):

Նիստն ինչպես հանդիսավորապես բացվել էր, այդպես էլ Ա. Վշտունու եզրափակիչ խոսքով փակվում է գիշերվա ժամը 11-ին: Վերստին պրոլետգրականության հեգեմոնիայի մասին կոչեր, նորից «Ինտերնացիոնալ» և շնորհավորական ուղերձներ՝ արտասահմանում ապրող բոլոր պրոլետգրողներին:

Համագումարի երկրորդ նիստը բացվում է հաջորդ օրը՝ նոյեմբերի 5-ին, հինգշաբթի, առավոտյան ժամը 10-ին, խորհրդարանի ակումբի դահլիճում: Նախագահում է Անուշ Փորսուղյանը:

«Քաղաքական ներկա պահի և մեր ներքին ու արտաքին քաղաքականության մասին» զեկուցմամբ հանդես է գալիս ՀԽՍՀ լուսժողովը և ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Մռավյանը: Քաղաքական ընդհանուր ակնարկից զատ, նա թուղցիկ անդրադառնում է նաև գրականության հարցերին: Նա ևս այն կարծիքն է հայտնում, ըստ որի Հայաստանի պրոլետգրողները պետք է կարողանան տիրել գեղարվեստական զենքին և ծառայել ներկա մարկսիստական ընդհանուր աշխատանքին, հակառակ դեպքում «Մի Ռաֆֆու ձեռնթը» կարող է գավառական մութ անկյունում ավելի մեծ գործ անել, քան մի գլուղական կոմբիջ» (էջ 24): Այս զեկուցումից տեղեկանում ենք, որ Մարոկոյում և Սիրիայում ծավալված պատերազմական իրադարձություններին մասնակցում են «մի ամբողջ գունդ հայ զինվորներ», որոնցից 100 հոգի սպանվել է Մարոկոյում, 600 հոգի՝ Սիրիայում: Ասվում է, որ նախկինում աշխատավայրերից հեռացած որակյալ բանվորական կադրերը աստիճանաբար վերադառնում են աշխատանքային գործունեության, բայց և շարունակվում է Պարսկաստանից հանքագործ բանվորների ներհոսքը Զանգեզուրի պղնձահանքեր: Հոստոթը նաև անդրադառնում է այն հարցին, որ արտասահմանից արդյունաբերական մեքենաներ գնելու համար անհրաժեշտ է արտահանել բարձրորակ գյուղատնտեսական արտադրանք:

Քաղաքական այս «անհրաժեշտ» ներածությունից հետո ՀՊԳԱ վարչության գործունեության մասին զեկուցում է Ալազանը: Ասոցիացիայի պատմության վերաբերյալ ներածական ակնարկը նա զուգակցում է գրողներ հավաքագրելու և գրական տնտեսությունը վարելու հարցերին: ՀՊԳԱ անցած ուղին նա իմաստավորում է նրանով, որ իրենք նախորդ տարիներին «հարկադրված էին կոիվ մղել մի կողմից ազգայնական հայ գրականության դեմ, մյուս կողմից՝ մասնը բուրժուական», ավելացրած նաև «նեոֆուտուրիզմի ներկայացուցիչներին»: Իրենց «քաջագործություններից» մեկը նա համարում է այն, որ 1923-ին ձախողել են Ծ. Չարենցի և Կ. Հալաբյանի նախաձեռնությամբ կազմակերպվող «Ավանգարդ» պարբերականի և խմբակցության ստեղծ-

ծումը: Սակայն, ըստ Ալազանի, ասոցիացիան կարողացավ «հարվածի այդ շարժումը և իր դիրքերում մնալ ամուր» (էջ 40): Այդ կապակցությամբ նա խոսում է իրենց շարքերը անցանկալի դրողներից մաքրելու մասին, որոնցից առաջինը եղել է ՀՊԳԱ-ի քարտուղար Գ. Մահարին՝ պրոլետարականության ակզրունքներից «շեղվող» իր «Տիտանիկ» ժողովածուով: Ալազանի խոսքերով՝ այդ գիրքը «չէր կարելի թուլատրել հրատարակել հորհրդային Միության մեջ: Այնտեղ խտացել էին բոսյակային ցրված մտքեր միայն, որի համար որոշվեց նրան էլ զտել» (էջ 41): Ուրեմն՝ Չարենցի, Մահարու դեմ պայքարելով, այսինքն՝ տաղանդավոր գրողների դեմ խաչակրաց արշավանք սկսելով, իրենց ինքնագոհ ոճով նրանք ասում են, որ այդքանից հետո ասոցիացիայի մեջ ընդգրկեցին «այնպիսի ընկերների, որոնք իրենց պարծանքն են կազմում»: Իսկ ովքե՞ր էին նրանք՝ հիմնականում կիսագրագետ բանգուլթղթակիցներ, քաղաքագիտական մտքեր կրկնող հարվածայիններ:

Այսքանից հետո Ալազանն անցնում է գոապայքարի նոր փուլին՝ թիրախ ունենալով Գ. Մահարու նախաձեռնությամբ լեհինականում ստեղծված «Հոկտեմբեր», ապա Երևանում իր գործունեությունը շարունակած և Ե. Չարենցի ղեկավարությամբ «Նոյեմբեր» վերամկրտված միությունը: Ահա նրա օգտագործած արտահայտությունները՝ «Միության ողորմելիություն», «Այդ խմբակը խլուրդային աշխատանքով պայքարի է դուրս եկել մեր դեմ», «Մեր ընկերներից մի քանիսը արդեն գնացել են գավառները աշխատանք տանելու՝ այսինքն հակառակորդ խմբերը քայքայելու» (էջ 42—45):

Հաջորդում են գեկուցումներ առանձին տեղական կազմակերպություններից: Խոսում է լեհինականի ներկայացուցիչ Սարմենը, որն անջատվել էր «Հոկտեմբերից», ուստի և արտահայտվում է այդ միության գործունեության դեմ: Նոր Բայազետի մասնաճյուղի կողմից, որը ստեղծվել էր 1925-ի հունվարի 10-ին և անգամ ուներ իր «Գյուղ գրող» պարբերականը, գեկուցում է Ռամա-Նայենցը: Մտքերի փոխանակության ժամանակ ն. Չարյանը նախ կոչ է անում «անողորմ պայքար մղել» «Նոյեմբերի» դեմ, ապա՝ ջլատել այդ միությունը և որոշ ուժեր միացնել ՀՊԳԱ-ին: «Նոյեմբերի» դեմ քաղաքական կազմակերպված պայքարի կոչ է անում նաև Արաքսը:

Ինչպես քաղաքական պայքարի ասպարեզում Ստալինն էր ձգտում ոչընչացնել իր հակառակորդներին և հասնել մենիշխանության, նույն կերպ վարվում էին նաև պրոլետարական գրողները և՛ Ռուսաստանում, և՛ Հայաստանում, և՛ ալլուր: Արսեն Հովհաննիսյան անունով մի պատանի ցանկանում է համագումարում դրական խոսք ասել Ե. Չարենցի հասցեին՝ «Գյուղում շատ է տարածված Չարենցի անունը: Ասում են, գիտե՞ք, Չարենցը մի գրող է, ով համաշխարհային նշանակություն ունի...» (էջ 52): Բայց դեռ նախադասությունը չավարտած՝ նախագահը նրան դիտողություն է անում. «Ընկեր, խոնդրում եմ խոսեք ըստ էության» (էջ 52): Այսինքն՝ պրոլետգրողների համագումարում Չարենցի մասին կամ պետք է խոսվեր բացասաբար, կամ՝ շխոսվեր:

Ա. Վ. Կատունին իր ելույթը նվիրում է պրոլետգրողների քանակական աճին և բարեհոգաբար հայտարարում՝ «Ապագան կասի, թե այս բոլորից քանի գրող դուրս կգան»: Դրանից հետո նա հանգում է այսպիսի հակադրական դատողությունների. «Ընկ. Արաքսը մի շափազանց սխալ կարծիք հայտնեց, ասելով, թե այստեղ նստողներից մի քանիսն են գրող միայն: Ընդհակառակը, այստեղ նստողները բոլորն էլ գրողներ են: Կորչի՞ մեզ համար մաստերիդը, մենք վարպետություն չենք ճանաչում» (էջ 53): Այս խոսքերը նա ասում է՝ ծափերի որոտի տակ վերստին պնդելով. «Մեր նպատակն է նորանոր ուժեր երևան բերել և դաստիարակել նրանց» (էջ 53): Այսինքն՝ քաղաքական գրագիտություն սովորեցնել: Այս դիրքերից էլ նա պայքար է հայտարարում նոյեմբերականների դեմ, նրանց որակելով որպես «մանրբուրժուական» գրողներ և գրական ղեկավարության մենաշնորհը վերապահելով միմիայն իրենց: Կրկնելով Վ. Կատունին և հետևելով «քաղաքական պայքարը շարունակվում է գաղափարական բնագավառում» կարգախոսին՝ ն. Գարաղանը իր հերթին ասում է. «Մաստերիդը միևնույն բուրժուական տեսակետն է գրա-

կանոնության ասպարեզում» (էջ 55): Այսինքն՝ ամեն ինչ հանուն կիսագրագիտության հաղթարշավի և ընդգծմ գրական վարպետության:

Համագումարի երրորդ նիստին, որը շարունակվում է նույն օրը երեկոյան, նախագահում է Ա. Վշտունին: «Պրոլետարական գրականության ուղիները ե ՀամԿ(բ)Կ Կենտկոմի բանաձևը պրոլետարական գրականության հեգեմոնիայի մասին» հարցադրումով զեկուցում են Գ. Աբովը և Գ. Վանանդեցին: Ըստ նրանց՝ Հոկտեմբերյան հեղափոխության ծրագրերը Հայաստանում իրականացնում են «Ալազանը, Ն. Զարյանը և մի քանի ուրիշ ընկերներ»: Ա. Կարինյանին, նաև Հ. Սուրխաթյանին զեկուցողները համարում են հայ Վորոնսկի, որովհետև նրանք դեմ են պրոլետարողների քանակի արհեստական աճին, նախապատվությունը տալիս են գրական վարպետությանը, չեն քողարկում ուղեկիցների հանդեպ պրոլետարողների թույլ տված սխալները և ասում են, որ ՀՊԳԱ-ն գրականության ասպարեզում իշխանությունը գրավում է ուժով: Անմիջապես հակասելով իրենց, պրոլետարողները հենց ուժային (և ոչ թե ստեղծագործական) դիրքերից էլ դեմ են արտահայտվում առանձին խմբակցությունների մրցակցությանը: Աբովը հայտարարում է. «Մենք ոչ մի դեպքում ազատ մրցում թույլ տալ չենք կարող բուրժուական գրական հոսանքների և պրոլետարական գրականության միջև... ազատ մրցման գաղափարը մեզ համար միանգամայն անընդունելի է» (էջ 71): Այս խոսքերը նա ասում է ծափահարությունների ուղեկցությամբ և զիջողության կարգով մրցակցությունն ընդունում «միայն ձևի ասպարեզում»: Ըստ Վանանդեցու՝ քանի որ Զարենցը ժամանակին հետևել է Տերյանին, ուստի չի կարող նոր ժամանակների լիարժեք գրող համարվել: Նրա կարծիքով Տերյան-Զարենց ժառանգորդական կապը մերժում է «հեղաշրջման գաղափարը»: ՎԱՊՊ-ի կազմում ընդգրկված 7000 բանթղթակիցների քանակը ներշնչում է նաև Վանանդեցուն, որը ևս դեմ է արտահայտվում «մաստերիզմ-վարպետիզմին»: Իր հերթին նա ժխտում է ազատ մրցակցության հնարավորությունը և պնդում ուժի դիրքերից հեգեմոնիայի հասնելու անհրաժեշտությունը: Այդ ճանապարհով է նա տեսնում մտավորականությանն ու գյուղացիությանը գաղափարապես նվաճելու հնարավորությունը: Հիմնավորապես ժխտում է ավանդույթը, անտեսում հին արժեքները. «Անշուշտ, հին կուլտուրան մի պատմական երևույթ է և հետզհետե կքայքայվի» (էջ 81):

Նույններն ընթանում են նույն հոնով: Հանդես է դալիս ոմն Հ. Կարոյան և հռետորական հարց տալիս. «Արդյո՞ք սգտագործել Րաֆֆին, Գամառ-Քաթիպան, Խաչատուր Աբովյանը, որոնք իրենց ստեղծած գրականությանը նացիոնալիստական շունչ են տվել...» (էջ 89): Նույն ոգով արտահայտվում են նաև Սիրասը, Ն. Զարյանը և ուրիշներ: Ն. Դաբաղյանը նույնիսկ ասում է, թե խմբակցությունների մրցակցությունը «գաղափարական տեսակետից անհանդուրժելի է, գա մենչևիզմ է»:

Չորրորդ նիստը սկսում է նոյեմբերի 6-ի առավոտյան, ժամը 10.45-ին, նախագահում է Ա. Վշտունին: «Պրոլետարական գրականությունը Հայաստանում» 2 ժամ 10 րոպե տևած զեկուցմամբ հանդես է գալիս Ն. Դաբաղյանը: Մինչև իր «համբարություն» անդամներին փառաբանելը, պատմական էքսուկուրով նա նախ ի մի է բերում մոտիկ անցյալի ժառանգությունը և միանգամից մանրբուրժուական գրողներին շարքը դասում Հ. Թումանյանին, Ա. Իսահակյանին, Լ. Շանթին, Վ. Տերյանին: Ըստ նրա տրամաբանության՝ քանի որ մանր բուրժուան չի կարող պայքարել խոշոր բուրժուազիայի դեմ, ստիպված է լինում քաշվել անապատ ու մեկուսանալ: Դրան հակառակ, նա բարձր է գնահատում բուրժուական գրականության կողքին հանդես եկած «բանավորական գրականությունը» (Շ. Կուրդինյան, Հ. Հակոբյան): Դաբաղյանը առանձնացնում է նաև գաղթօջախներում գոյատևող վտարանդիական գրականությունը, որը, ըստ նրա, «քայքայվող բուրժուազիայի գրականությունն է»: Այս նախաբանից հետո Ն. Դաբաղյանը շարադրում է Հայաստանի պրոլետարական գրականության պատմությունը՝ սկսելով «Մուրճ»-ական շրջանից և հասնելով մինչև իր օրերը: Այդ ընթացքում նա նաև ուրվագծում է ուղղափառ պրոլետարողներից ոմանց գրական կերպարները. բանաստեղծ-

ներից՝ Ա. Վշտունի, Գ. Աբով, Ալաղան, Ն. Ջարյան, Սարմեն, Խնկո Ապեր, Ծ. Դանյո, Հ. Մերկյան, Ռամա-Նայենց, Գ. Շամունց, Գ. Հայկունի, արձակագիրներից՝ Սիրաս, Անուշ, Արաքս, Ս. Մելիքսեթյան: Վշտունու անհայտնության հանդեպ արևելյան երգերը փառաբանելով՝ նա քննադատում է նրանց, ովքեր պահանջում են տեղական նյութ ու կոլորիտ: Ծայրահեղացնելով վերջիններիս պահանջը՝ Դարադյանը գրում է. «Նրանք ասում են՝ պետք է երգել Ապարանը, Եիր ջրանցքը, Քանաքեռից մինչև Նորքն ու Զանգուն...»: Այնուհետև՝ «Այն կոնկրետի դմբ, որ պահանջում են մեր հակառակորդները, վերջիվերջո մի վուլգար պահանջ է: ...Կոնկրետի դմբ պահանջող խմբակցությունը Եիրակի ջրանցքից և Լենինականից դենը դուրս չեկավ» (էջ 109): Մենաշնորհն իրենց ձեռքում պահելու նպատակով նա նաև փորձում է ջլատել քննադատական ուժերը. «Մենք չենք կարող վստահել մեր հին քննադատներին, որքան էլ նրանք հին մարքսիստներ լինեն, այլ քննադատությունը պետք է դրված լինի պրոլետարականության շահագրգռված անհատների ձեռքում» (էջ 110): Որպես նոր քննադատության արտահայտիչ նա առանձնացնում է Գ. Վանանդեցուն, իսկ Հ. Սուրխաթյանին դասում հենքի շարքը: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ Վանանդեցին իրենց «եղբայրության» ներկայացուցիչն էր, իսկ Սուրխաթյանը պաշտպանում էր Չարենց-Բակունց-Մահարի-Արմեն գիծը: Ուստի՝ բնական է, որ այդքանից հետո նա պետք է հարձակվեր «Նոյնմբեր» միության վրա և այն համարեք «մանրբուրժուական տարրերի կազմակերպություն»:

Երբ զեկուցումից հետո Դարադյանին հարց են տալիս, թե «ինչո՞ւ Չարենցի մասին չխոսեցիք», առանց տատանվելու նա պատասխանում է. «Մեր տեսակետը Չարենցի մասին պարզ է. Չարենցը մանրբուրժուական իդեոլոգիա ունեցող մի բանաստեղծ է, որը երբեք չի ելնում պրոլետարական հեղափոխության և պրոլետարական գրականության տեսակետից: Նա երգել է խելագարված ամբոխը, մի ամբոխ, որ բաղկացած է շատ խառնիճաղանջ տարրերից և երբեք իր մեջ պրոլետարիատի հստակ գիտակցություն չունի: Պարզ է, որ այդպիսի բանաստեղծներին պրոլետարող անվանել մենք չենք կարող, և այդ պատճառով ես նրա մասին չխոսեցի» (էջ 112):

Ջարմանալի մերկայարանոց է՝ գրական քննադատությանը Ն. Դարադյանի հատկացրած դերը. «Մեր քննադատությունը պետք է ընթանա այն գծով, որ շողկապված լինի գրականության հետ և անմիջապես բխի նրանից» (էջ 110): Այսինքն՝ քննադատությունը պետք է դառնա Վշտունու, Ալաղանի կամ Ն. Ջարյանի կցորդ, լավագույն դեպքում՝ հավելված: Երևի թե հենց այս կողմնորոշումով էլ նա կառուցել էր իր զեկուցումը՝ և բխեցրել իր եզրակացությունները, ըստ որի՝ Ալաղանին նա համարում է «պրոլետ-լիրիկ», Ջարյանին՝ «պրոլետ-էպիկ»: Այս նոր մտայնությունը շարունակվում է նաև գրական ընդհանուր բնութագրությունների մեջ: Նոր քննադատություն, ըստ նրա պատկերացումների, պետք է լինի այսպիսին. «Ստեղծել պրոլետարական լիրիկա ոչ միայն անհատի լիրիկական ապրումները արտահայտելով, այլև ստեղծելով կոլեկտիվիստական լիրիկա» (էջ 111): Եփոթն ավելի է խորանում, երբ «կոլեկտիվիստական լիրիկան» «ներկա իմաստով» նա ըմբռնում է իբրև «էպիկական գրականություն», քանի որ «ի վերջո այդ լիրիկան արտահայտությունն է լինելու հասարակական շերտավորման» (էջ 111):

Զեկուցման քննարկումը հիմնականում նույն մտքերի կրկնությունն է: Շամունցն ասում է. «Երգել կոնկրետի դմբ, այն, ինչ որ գոյություն ունի ռեալ իրականության մեջ, սխալ է» (էջ 114): Վանանդեցին՝ «Չարենցի վերաբերյալ մենք տարիներով պայքար ենք մղել, որպեսզի թե ինչ ձևով մոտենանք նրան» (էջ 115) և հողին է հավասարեցնում նրա ամբողջ վաստակը, այդ թվում՝ նաև «Ամբոխները խելագարվածը»: Նրա «իսկական սոցիալական գծերը», ըստ Վանանդեցու, «մանրբուրժուական են, քաղքենիական, որ ծնունդ են կատարությունից բռնկված մեռնող դասակարգի...»: Այստեղից էլ կոչը՝ կորչի՝ Չարենցը, քանի որ նրա խոսքի բովանդակությունը «դուրս է գալիս մանր բուրժուազիայի այլասերված եսի արտահայտությամբ»: Այնուհետև՝ «պետք է հետևել մեր հեղափոխական ուսուցիչներին և մեզ չենթարկել մանր

րուրժուական գրողներին... կապված լինել ժամանակակից հեղափոխական տրամադրությունների հետ, որից զուրկ է Չարենցը... Մենք կռվել ենք Չարենցի ուղղության դեմ և կկռվենք... Մեր կողմից գիտակցաբար սկսվեց Չարենցի շեղումը» (էջ 115—116): Ահա այս մտայնությամբ էլ նա դեմ է արտահայտվում ամեն տեսակի մրցակցության և ինքնագոհ տոնով հայտարարում. «Մեր միությունն սկզբունքային տեսակետից դասակարգային գրականության նոր ուղղություն է ստեղծում»:

Չարենցի մասին իր վերաբերմունքը խնկո Ապերը ձևակերպում է այսպես. «Ըստ Չարենցի տաղանդը գնահատողներից եմ, բայց նա իր տաղանդավորությամբ կամ իր աղանդավորությամբ մի վատ գործ է կատարել, որ վերևից թքել է, իսկ ներքևից արջի երախը բաց է թողել և կեղտոտել է երեսաներին: Նա մի ճեղքվածք է բաց արել մեր պրոլետարիատի մեջ, որի դեմ ես բողոքում եմ» (էջ 118): Ն. Չարյանն ասում է՝ «Մեզ առաջին հերթին անհրաժեշտ է քաղաքագիտություն իմանալ, որպեսզի հասկանանք, թե ի՞նչ է տալում ենք և պարում և ո՞րն է մեր էպոխայի շարժիչ հեգեմոն դասակարգը» (էջ 118): Այս մակերեսային և մերկապարանոց քաղաքագիտության դիրքերից էլ նա հարձակվում է Մահարու վրա և հայտարարում. «Ամեն անկեղծություն ցանկալի չէ, որովհետև սա էլ մի մանրբուրժուական լողուն է, որի տակ թաքնված է պրոլետարական գրականության դեմ պայքարելու ցանկությունը» (էջ 119):

Առանձնանում են մի քանի ելույթներ, որոնց հեղինակները, համեմայն դեպ, ճիշտ ելակետ ունեն: Տ. Վանյանը նախ վերստին արժադատում է պրոլետարականության կոնկրետության պակասի հարցը, Վշտունու և հետնորդների արևելքի երդերը նկատի ունենալով, ասում, որ նրանք «տարիներ շարունակ նույն նեյնիմն են ասում և շեն ուզում դուրս գալ մի որոշ նյութի սահմաններից» (էջ 112) և ապա Դաբաղյանի կոպիտ հարձակումներից պաշտպանում Չարենցին, շեշտելով, որ պրոլետարիատները աշատ են կարգացել» Չարենցին «և շատ էլ օգտվել են նրանից» (էջ 113): Այս կապակցությամբ վերջին խոսքով հանդես է գալիս Ն. Դաբաղյանը և ասում. «Միանգամայն ծիծաղելի է, երբ ասում են, թե մենք պետք է սովորենք Չարենցից»: Մենք պետք է պրոլետարական գրողների առաջնորդ ընդունենք Հ. Հակոբյանին՝ որի ուղղությամբ պետք է գնան մեր մնացած ընկերները: Նա է հանդիսանում պրոլետարականության առաջին պոետը և ոչ թե Չարենցը» (էջ 119):

Կազմակերպական հարցերի մասին զեկուցում է Ա. Վշտունին և նախորդներից շտովորելը արդարացնելու, այսինքն՝ հիմնավորելու համար իր «հակամաստերիզմը» ասում, որ անգամ «Սովորել, սովորել, սովորել» կոչը «վերջ է վերջո մի մանրբուրժուական տենդենց է»: Ըստ նրա՝ ոչ թե անհատները պետք է սովորեն, քանի որ դա կարող է հասցնել «ինդիվիդուալիզմի», այլ պետք է կազմակերպել խմբական ընթերցանություններ... որոնք ավելի օգտակար կլինեն ընկերների զարգացման համար, քան թե անհատական սովորելը: Մենք սովորելը հասկանում ենք կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ» (էջ 122): Վերստին նա անդրադառնում է գրական խմբակցությունների մրցակցության հարցին և այս անգամ ավելի որոշակի, քան առաջ հայտարարում. «Չպետք է բացասել, որ մրցումը ի վերջո վտանգավոր է մեզ համար», քանի որ «Յուրաքանչյուր խմբակ անպայման կցանկանա ինքն ավելի լավ արտահայտել մասսաների հոգեբանությունը, քան մյուս խմբակը» (էջ 122): Այսինքն, գիտակցելով իրենց պարտության հնարավորությունը, նա սկզբից ևեթ մենաշնորհը վերապահում է իրենց, անընդհատ պնդում դա՝ ասելով նաև, որ ուղեկիցներին անհրաժեշտ է զցել «մեր ազդեցության տակ», որ իրենց ղեկավարությամբ ժամանակն է ստեղծելու նաև հայ գրողների ֆեդերացիա:

Նույն օրը երեկոյան բացվում է հինգերորդ՝ եզրափակիչ, նիստը: Նախագահում է Գ. Աբովը: Մովաչվում է մտքերի փոխանակություն Վշտունու զեկուցման շուրջ: Նորից հարձակումներ Չարենցի և «Նոյեմբերի» դեմ՝ «Այնտեղ կան պոպուլյուլիներ և փոքր գրողներ»: Նորից սնապարծ ինքնագոհու-

թյուն, նորից ուժի դիրքերից հեգեմոնիայի հասնելու կոչեր: Հազվադեպ միայն ճիշտ ինքնագիտակցում. «Այժմ մեզանից ոչ ոք գրող չէ, մենք բուրժու սկսնակներ ենք, թերևս մեզանից մի քանիսը ապագայում գրողներ դուրս գան»,—ասում է Արաքսը (էջ 129): Ու՛ անմիջապես հակահարված Ալազանի կողմից: Ինչպե՛ս կարելի է Դանթեին ու Պոեշկինին «գերազանցած» պրոլետ-դրողներին համարել սկսնակներ:

Այնուհետև մանդատային հանձնաժողովի կողմից զեկուցում է է. Խո-ճիկը և հրապարակում ասոցիացիայի թվակազմին առնչվող տվյալներ:

Ժողովականները, ինչպես համագումարի ժամանակ, այնպես էլ համագումարից առաջ և հետո ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջ հարց են հարուցում «Պրոլետգրող» վերտառութային գրական հանդես հրատարակելու մասին: Կազմվում է նաև համապատասխան նախահաշիվ: Բայց «միջոցներ չունենալու» պատճառով խնդիրը մերժվում է:

Ահա այսպիսի պատկեր է ներկայացնում պրոլետգրողների առաջին համահայաստանյան համագումարը: Ի մի բերելով զեկուցումներն ու ելույթները՝ կարող ենք ասել, որ համագումարը իրենով նշանավորեց սխեմատիզմի վերջնական ամրապնդումը ինչպես բուն գրական սկզբունքների, այնպես էլ՝ գրական հարաբերությունների մեջ: Այդ են վկայում մի կողմից պրոլետգրողների գեղարվեստական երկերը, մյուս կողմից նրանց անհանդուրժողական վերաբերմունքը Չարենցի գլխավորությամբ գործող «Նոյեմբեր» միութային դեմ: Գեղարվեստական այդ կողմնորոշումը շտվեց և չէր էլ կարող տալ քիչ թե շատ լուրջ գրական արդյունք, իսկ խմբակային առճակատում, ի վերջո, ունեցավ շատ ողբերգական ավարտ: Մի կողմից կտրվելով դասական ավանդույթներից, անցյալի արժեքները համարելով «բուրժուական», «մանրբուրժուական», «եկեղեցական», մյուս կողմից՝ շահադուրժելով այլախոհ գրողներին՝ Չարենցի խմբի հետ մեկտեղ նաև ուղեկիցներին, պրոլետգրողներն ընկան ստեղծագործական մի փակուղի, որի թափանիվը ապարդյուն ու անարդյունք նրանք պտտեցին ամբողջ 20—30-ական թվականներին: Այսպիսով՝ նրանք կասեցրին գրականության պատմական և օրինալի գարգացումը, իսկ առաջընթացը գլխավորապես ապահովում էին մերժվածներն ու հալածվածները, որոնք և ընդդեմ այս ինքնակործան սխեմատիզմի ստեղծեցին ընդդիմադիր՝ օպոզիցիոն շարժում: Ու թեև ժամանակին դրա համար վճարեցին իրենց արյամբ, բայց և իրենց կյանքի գնով ապահովեցին գեղարվեստական մտքի զարգացումն ու սերունդների ժառանգորդական կապը:

УКОРЕНЕНИЕ СХЕМАТИЗМА В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

(по материалам первого всеармянского съезда ассоциации пролетарских писателей)

Д. В. ГАСПАРЯН

Р е з ю м е

Материалы первого всеармянского съезда ассоциации пролетарских писателей (4—6 ноября 1925 г.) отражают литературно-политические реалии того периода. Пролетарские писатели (А. Акопян, А. Вштуни, Н. Зарьян, Алазан и др.), отдалившись от традиций классической литературы и, на основе своих принципов, отрицая патриотизм, любовную лирику, психологию, необходимость изображения живого человека, утверждали в своих произведениях неприкрытый схематизм, основанный на поверхностном отображении «трудовых» и «коллективистских» настроений. С этих позиций армянские пролетарские писатели вели непримиримую борьбу с Е. Чаренцем, А. Бакунцем, Г. Маари, М. Арменом и др., которые, объединившись в литературной организации «Ноембер», отстаивали интересы правдивой литературы.

IMPLATATION OF SCHEMATISM IN THE ARMENIAN LITERATURE

(on the materials of the All-Armenian Congress of the Association of Proletarian Writers)

D. V. GASPARIAN

S u m m a r y

The proletarian writers (H. Hakopian, A. Vshtuni, N. Zarian, Alazan et al.) having distanced themselves from the traditions of the Classical literature and advanced the principles renouncing patriotism, love lyrics, psychology, the need to depict a living person, have affirmed in their works the blatant [schematism based on a superficial reflection of the „worker“ and „collectivist“ moods. From these positions the Armenian proletarian writers waged an unremitting war against E. Charents, A. Bakunts, G. Mahari, M. Armen et al. who united themselves into the literary organization „Noember“ to advocate the interests of the true literature.